ՏԵՂԵԿԱՆՔ

«ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 12. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ օրենքի՝

1) 4-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասով սահմանված ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջների, որոնք ուժի մեջ են մտնում ~~2021~~ ***2022*** թվականի հունվարի 1-ից,

բ. 4-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից.

2) 5-րդ հոդվածի՝

ա. 6-րդ մասի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ~~2021~~ ***2022*** թվականի հունվարի 1-ից,

բ. 8-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված՝ շենքերի մուտքերից ուղիղ գծով սահմանված հեռավորության վրա իրացման արգելքը սահմանող նորմերի, 5-րդ, 6-րդ, 8-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո.

3) 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

ա. «ը» ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 15-ից,

բ. «թ» ենթակետի, 2-5-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից.

4) 7-րդ հոդվածի 3-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում ~~2021~~ ***2022*** թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» 2004 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-72-Ն օրենքը:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով, 4-րդ հոդվածի 2-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ և 3-րդ մասերով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթաօրենսդրական ակտերի, որոնք ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեքամսյա ժամկետում: